

# ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Posted on October 21, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Սեդա Թելեան, Քեպեք, 21 Հոկտեմբեր 2011 իրերայաջորդ  
2011-ի սկիզբէն կը պատրաստուէր հանդիպումը ....

Ան տեղի պիտի ունենար Յունիսի 16-էն 19 երկարող շաբաթավերջին՝ Ուաշինկթընի մէջ:  
Պէյրուքի ՀԲԸՄ-ի Դարուհի Յակոբեան Երկրորդական Վարժարանի 1962 տարուան  
շրջանաւարտ դասարանը պիտի տօներ իր դպրոցի ակարտման 49-ամեակը:



Սեդա Թելեան, Քեպեք, 21 Հոկտեմբեր 2011 իրերայաջորդ  
2011-ի սկիզբէն կը պատրաստուէր հանդիպումը ....

Ան տեղի պիտի ունենար Յունիսի 16-էն 19 երկարող շաբաթավերջին՝ Ուաշինկթընի մէջ:  
Պէյրուքի ՀԲԸՄ-ի Դարուհի Յակոբեան Երկրորդական Վարժարանի 1962 տարուան  
շրջանաւարտ դասարանը պիտի տօներ իր դպրոցի ակարտման 49-ամեակը:



Մեր անգուգական ընկերուհիներէն Անի Սիմոնեան-Թոթան իր տունը տրամադրած էր  
որպէս կեցութեան վայր՝ բոլորիս համար անխտիր. ան նկատի առած էր ամենադոյզն  
մանրամասնութիւնը որպէսզի իր մօտ մեզի ընծայուած հրաւերը ըլլար հանգստաւետ,  
հետաքրքրական ու յիշատակելի ...

Հիւսիսային Ամերիկայի տարբեր քաղաքներէն, ինչպէս նաեւ Լիբանանէն, իրարու  
յաջորդելով կը հասնէինք ժամադրավայր. գիրկընդիսառնում, ողջագուրում, խինդ ու  
արցունք կը հրմշտկէին զիրար ... Շուրջ կէս դարուայ ֆիզիքական հեռաւորութեան մը  
ընթացքին ապրուած կեանքէ մը ետք կը վերագտնէինք զիրար. կարելի՞ է միթէ գրիչով  
նկարագրել վայրկեաններն այդ երանելի ...

Երբեմնի մեր դասարանի 24 աշակերտուհիներէն 12-ը ներկայ էին. 13րորդը Անգլիայէն՝  
մետասաներորդ ժամուն անհանգստութեան պատճառաւ բացակայեցաւ հաւաքէն:

Ընթրիքի ընթացքին հերթով խօսք առինք բոլորս, նկարներու օգնութեամբ պատմեցինք  
անցած-դարձածները. ուրախացանք յաջողութիւններով, ու տխրեցանք մեր ցաւերուն  
թողած սպիներով ...


Մեծցած էինք որքա՛ն ու հասունցած, պահելով հանդերձ պատանեկան օրերու անմեղ  
չարածճիւղութիւնները ոմանց համար, կատակասիրութիւնն ու լրջութիւնը ուրիշներու  
համար:

Մայրեր ու մեծ մայրեր էինք գրեթէ բոլորս. պատրաստած էինք սերունդ մը հետեւելով Յ.

Շիրագի, մեր պատուական ծնողներուն, որոնք արտաշխարհի մէջ հայկական եկեղեցիներ ու դպրոցներ կառուցողներու սերունդին կը պատկանէին, եւ անշուշտ մեր ազգանուէր ուսուցիչ-ուսուցչուհիներու կտակին. չէ՞ որ վերջ ի վերջոյ Վահեաններու, Թօփճեաններու, Ահարոնեաններու, Մելքոնեաններու, Պետիկեաններու եւ այլ խոնարհ հերոս-հերոսուհիներու հոյլին պատկանող՝ անոնց դաստիարակած սերունդին կը պատկանէինք մենք. «խարխուլ խրճիթ»ներէ ծնած աշխարհներ էինք ամէն մէկս՝ համեստ կարծիքս վկայ:

Յաջորդ օրերու ընթացքին, իրարու հետ բաժնեցիկ պաշտօնական եւ անպաշտօն ընթրիքներ, գիշերանոցով մտերմիկ նախաճաշեր, ըրիկք խմբովին մարզանքներ, լողացիկք միասին, զբօսնեցիկք, մեր ձիրքերու ցուցադրութեամբ գերազանցեցիկք մենք զմեզ. Անիի գեղազարդ սրահներէն մէկուն մէջ ամէն մէկս հանդէս եկաւ իր բնատուր այլեւ կատարելագործուած կարողականութեամբը. երգ, նուագ, կատակներ, պար, ասմունք, մեր դպրոցական կեանքը վերապրեցնելու համար պատրաստուած հարցարաններ յաջորդեցին իրարու. ամէնէն հետաքրքրականը սակայն, տանտիրուհիին - մինչ այդ մեզի բոլորիս անձանօթ - երգելու տաղանդն էր : Երա՞գ էր թէ իրականութիւն ...

Վերադարձի մեր նախօրեակին, ներկայ գտնուեցանք Ուաշինկթընի Ազգային Նուագախումբի ներկայացման. բնական է այցելեցիկք նաեւ Ուաշինկթընի տեսարժան վայրերը, որ պսակադրուեցաւ տեսակցութեամբը, նախապէս առնուած ժամադրութեամբ, congressman Chris Van Hollen-ի հետ: Capitol-ի մէջ. ան ազնուօրէն ընդունեց մեզ եւ առաջնորդ մը տրամադրեց որպէսզի պտըտցընէ մեզ վերոյիշեալ կառոյցի զանազան սրահերը: Մեր խորին շնորհակալութիւնները յայտնեցիկք կոնգրէսմէնին Հայկական Հարցին առնչութեամբ իր ուաշադրութեան եւ տարած աշխատանքներուն ի խնդիր:

 Ինչքա՞ն աշխատանք, խոնջեկք, յոգնութիւն ու քրտիկք թափած է Անին, յաճախ տրամդրելով իր բնակարանն իսկ, իր անձնական այլազան գործերուն զուգահեռ եւ նոյնիսկ գերադաս՝ յառաջ տանելու համար մասնաւորաբար մեր քաղաքական ոյժը: Ազգասիրութեան, ազգանուիրումի, զոհողութեան որակներով զարդարուած՝ հայուհիի տիպար օրինակ մըն է ան, որուն հետ աշխատիլը մեր դատին ի խնդիր, մեծ հաճոյք է. քաջ գիտեմ նաեւ թէ մեր ժողովուրդին մէջ քիչ չեն իր նմանները : Առ այդ, գործակցիկք իրարու հետ, ընենք այնպէս որ չչեզօքացնենք ոգի ի բռին տարուած աշխատանքները՝ երկուստէք, չխաչածեւենք զիրար, վերացնենք «Մենք»ն ու ... «Անոնք»ը ու զօրանանք միասնաբար. բոլորս ալ Հայկ Նահապետի ու Քաջն Վարդանի Թոռները չե՞նք միթէ, Հայկական Հարցը բոլորս հետաքրքրող հասարակաց հարց մը չէ՞ արդեօք: Զէ՞ որ «Եթէ կրնաս բարձրացիր, բայց գիտես ու՞ր, մինչեւ ու՞ր, եւ ուրիշներն քեզի հետ, եթէ կրնաս բարձրացուր...»

Բարձրանա՞նք. քանի վեր ելլենք ջերմացնենք զիրար, որպեսզի օր մը «Վարդահեղեղ Արշալոյսի մը», որուն «ոտնաձայնը» ես ալ կ'առնեմ ահա, հակառակ բոլոր դժուարութիւններուն հասնինք մեր նպատակին, մեր սրբազան լեռան կատարին: Դարուհիի, Յովակիմեանի, Ճեմարաններու, Հռիփսիմեանցներու, Մխիթարեաններու, Աւետարանական Գոլէճներու սերունդները վկայ: Թող իրարու նեցուկ կանգնելով աշխատիլը ըլլայ պատգամը, կտակը մեր՝ գալիք սերունդներուն:

Բիւր շնորհակալութիւններ Անի՛, առանձին-առանձին մեր բոլորին կողմէ, եզակի ու գերազանցօրէն առաջնակարգ հիւրասիրութեանդ համար. վարձքդ լիօրէն կատար:

